ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

01-ը մայիսի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՄԱՅԻՍԻ 1-Ի ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանում ի թիվս այլ երկրների Մայիսի 1-ը տոնական օր է, այսօր նշում ենք աշխատանքի և աշխատավորների համերաշխության միջազգային օրը, որի կապակցությամբ սրտանց շնորհավորում եմ մեր գործունյա ու ստեղծագործ ժողովրդին:

Դարեր շարունակ հայ ազգը իրեն հատուկ ճկուն մտքով ու արարող ձեռքերով ստեղծել է մնայուն արժեքներ, կերտել պատմություն, կառուցել հայրենիք ու արդար աշխատանքով վաստակել սեփական երկրում ապրելու և արարելու իր իրավունքը: Մեծագույն հարգանքի են արժանի ամենօրյա քրտնաջան աշխատանքով մեր երկիրը շենացնող աշխատավորները, տարբեր բնագավառներում գործունեություն ծավալող արհեստավարժ մասնագետները: Համատեղ ուժերով պիտի ստեղծենք մրցունակ երկիր ու համայնքներ, որտեղ կբացվեն աշխատատեղեր, կապահովվեն աշխատանքային լավագույն պայմաններ ու համարժեք վարձատրություն: Մայիսմեկյան տոնի առիթով առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյան համայնքի աշխատավոր բնակչությանը, համայնքապետարանի աշխատակազմին, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին: Հարգելի՛ գործընկերներ.

Անչափ կարևորում և գնահատում եմ յուրաքանչյուրիդ նվիրված աշխատանքը, համընդհանուր շահին ու համայնքի զարգացմանն ուղղված հետևողական գործունեությունը: Մաղթում եմ բոլորիդ աշխատանքային առաջընթաց և մասնագիտական հաջողություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ